

ԵՐԵՍԵՐՈՐԻ ԵՐԵՍԵՐՆԵՆ

ՉՄԻՒՈՒՄ, 30 ՅՈՒՆԿԱՐԻ

Վենետիկյ Սխիթարեան ուխտին վարժմի միջաբան վերապատուելի և դիմակահան տէր Փրիզգոր վարդապետը խաղաղաբար կարգադրեալն որ ի Փարիզ, անդաւրսական ուրիշ շարժեալ տրտուռական նամակ մը հրատարակել տուած է Սախի լրագրոյն յունվարի 14 թերթին մէջ, խտայնքէն և հայերէն երկու պարտաւարդոց նկատմամբ, որ շատ ժամանակ չէ, երևան ելան ազգիս մէջ: Այս ծանրակիւն նամակը շատ և մինչև ցայսօր անձանօթ ճշմարտութիւններ կը յայտնէ ի շինութիւն ընդհանուր հայկազուն ժողովրդեան, վանորոյ արժան համարեցինք հազարքէլ զայն մեր բարեկէր ընթերցողացը, նոյն նամակին վրայ յօր Սախի պատուական լրագրոյն յառաջարկուած թիւնն և մէկտեղ դնելով:

«Միջեալ տարւոյն կրօնական ցաւալի վեճերէն գայթակղեալ մեր բարեկէր ազգայինները՝ հաճութեամբ պիտի տեսնեն հետեւեալ պատուական նամակը. զոր Փարիզէն արժանապատիւ խաղաղաբար և անհրաժեշտ յարգապետը յուղարկած է:

«Վարդապետութեան, ճշմարտութեան, քաղաքակրթութեան և ազգասիրութեան ձայնը այս երկրորդ անգամ Փարիզի Սխիթարեան լուսաւորեալ Հարց բերնէն լուսիլը, բոլոր ազգայնոց սրբախնայնաբար և մեծ ուրախութիւն պիտի աղգէ, որչափ որ այս վերջին ձայնը՝ աւելի յստակ ստեղծ բացայայտ, աւելի ազգու և կատարեալ քրիստոնէական է, և միանգամայն ծանրակիւն յայտնութիւններ կ'ընէ:

«Նորարարիցս եմք, որ երբոր ազգերնուս պատիւը և խղճմունքը վիրաւորելու պատճառ եղանակներ բուն իրենց սղծարար մասէն այսպէս ծանր կերպիւր կը դատաւարտուին, և երբոր ճշմարտութեան ջատագովութիւնն ու պաշտօնաւորութիւնը Սխիթարեանց ամենէն ընտիր անդամը կողմէն կը տեսնուի, գայթակղութեան հոգեկոտոր իւր արգար սահմանին մէջ կ'ամփոփի, և ազգերնուս թշնամին ու բարեկամը մէկմէկէ որոշուելով, անստուգութիւնն և անիրաւ կտակածները կը փարատին, խաբուած միտքերը կը լուսաւորին, սիրտերը կը հանդարտին, հետեւաբար նախընթաց թերթերնուս մէջ ի բոլոր որտէ ԸՄՃացած երջանիկ խաղաղութեան հասնելու առաջին քայլափորը ըրած կ'ըլլանք նոր տարւոյս մէջ:

«Հաւատիկ յիշեալ երեւելի նամակը, զոր ամենայն ճշմարտութեամբ և հաւատարմութեամբ կը հրատարակեմք»:

«Իմ օգտաման ազնիւ Պարոն:

«Փարիզ, 7 Յունվարի 1853:

«Հարկը մեզ կ'ըտտիպէ, որ կարճաժամ մը ազգայնաբար յաջեանի բաշխուողաց և պղտորողաց վրայ խօսինք. բայց միտքս լաւ բացատրելու համար՝ հարցման և պատասխանեցող ձևը կ'ընտրեմ:

«Հարցմանս. — Վարդապետ, հրամանեց ի՞նչ կ'ընես, ի՞նչ կը մտնաս՝ այս խտայնքէն և հաւերէն ճշգրտութեան վրայ, և անոնց ետեւէն ելած պետականութեան և բողոքներուն ի հերքումն և ի ջատագովութիւն: Յերաւի կը տեսնենք, որ Սխիթարեանք ալ բեւեռական աստղը, մանաւանդ թէ բեւեռացողը (բուսուրան) խառնափնջորդեցին: Այս վեճերը երեսուներեք տարի առաջ եղածներուն շնամիր, վասնզի անոնք սահուն լեզուով կ'երթային, իսկ ասոնք գրչով, որ շատ վատ է, ըստ որում ազգս թնդաց և վերաւորեցաւ, և հիմա ճիշդ կը գտնուինք այն առաջին մէջ որ կ'ըտուի կազ և կոխ կոբաց:

«Պարտախնդիր. — Արտիկտեալ կը տեսնեմ, որ այս ամէն եղանակներուն քաջ տեղեակ էք, ըստ խորհրդոյ և գաղտնի պատմագրաց և կենցաղագէտ անձանց, որ աշխարհքի օրինաց և ուղիղ

ընթացից տեղեկութիւն ունին, պատասխանալիքները: Նախ և առաջ կ'ընեմ, թէ այդ երկու գրքերը, թէ խաղաղութիւն և թէ հայերէն մեր կ'ընեն ու ատելութիւն կը դարձան. ճշմարտութիւն կ'ընեն, ու ծուռ և արգիւլեալ ճամբաներ կը բախեն: Հաւատք կ'ընեն, ու լսողները հաւատքէն կը բախեն. սուրբ Վրդ Կ'ընեն, ու մեզ զայ մեղայ, սուտ գիրք կը յայտնեն իրենց ընթացքով: Արեւոյն ալ անուննին ծածկելով, իր թէ գիտակ (սուրբ) անցուցին երեսին, միթէ իրենք անուանի մարդիկ, և գրեւորներն բարձր և սրանչի լի բաներ ըլլալով, խոնարհութեան համար. սուտ է: Սխիթարեան և վատ և ամենուն առջև արհամարհելի: Այս իրաւ է: Ար տեսնողներուն աչքը սուր ըլլալով, այն գիտակին ծակերէն տեսաւ և մինչև հոգիներն թափանցեց ասոնց, թէ ի՞նչ է, և ի՞նչ հոգիէ գրգռեալ. չէ թէ ի՞նչ ճշմարտասիրութեան է, այլ յեղբայրատեցութեան է, յամուտութեան մտաց և ի շահախնդրութեան է, որք Մարտիցս շարած Հոգւոյն սրբոյ պատուհաններէն այնչափ հեռու են, որչափ երկիրը երկրէն: Շատ եղած են հին և նոր ատեններս Վարդապետ ամէն ազգաց մէջ զանազան այսպէս վեճեր և ընդդիմութեանութիւններ, զորոնք կարգացող թէ և ստանալութիւն մըն ալ անոնց մէջ նշմարէ և ճշմարտութիւնը չի ընդ ըմբռնել, գտնէ գրեւորներն եղանակէն և բարակ առումներէն խելք մը կը տարիլ, ճարտասանութիւն մը կը տեսնէ. բայց ասոնց մէջը, ի՞նչ ըսեմ, ու մի մտական ոճերէն զատ տեսնելը չկայ, որ կարգացողին խելքը կը պղտորի, գէմքը կը խոժոռի և սիրտը կը բաշտի:

«Իտալերէնը յարմար և անյարմար, առանց մեթոտի և կարգաբանութեան, ամէն փողոցներէն և խորհրդէն խելքանք այսինքն զպարտութիւններ ժողովելով՝ Սխիթարեանց վրայ, այս պիտի ստիպտական ձեռնարկութեամբ, թէ «Հայոց ազգը հերձուածող է. վասն զի գտաւ պարտութիւն հերետիկոսաց վարդապետութիւնը ունի (սուտ և սխալ գրութիւն), և որպէս թէ Սխիթարեանք ջատագով կեցեր են ազգին (իրենց սրբոց Հարց վարդապետութեանը և սուտութեանցը), ուրեմն նոյն վատ անունները իրենց վրայ ալ պէտք է որ տանք» (բողոքի սուտ հետեւութիւն):

«Նոր գէմ հայերէնը գրողը մէկ ձեռնարկութիւն մը պէտք էր ընել և վրայ ելել այսպէս. թէ «Հայոց ազգը երբոր իւր սուրբ Հարց վարդապետութեանը և աւանդութեանցը կը հետեւի կոր և կը պահէ, և անոնց գայթակղական գրեւորները կը հերքէ և կը մերժէ, (վասն զի որ կեկեղեցւոյ մէջ չկայ այսպիսիներ), ու զպարտութեան հայրենի լեզուն չբխողոքներուն և ազգային գրականութեանը չարապար մեկնողներուն գէմ, ուրեմն ճշմարիտ ուղղափառ են, և մի, սուրբ, կաթողիկէ, առաքելական եկեղեցւոյ ընթացքները աշխատողք են»:

«Բայց այսպէս չընենք այն հայերէնը գրողը. այլ խտայնքէնին տղայական և խղիատակ առջևնիս ձգած խօսքերը մեկիկ մեկիկ կ'առնէ, և մի և նոյն սղւալ և թերեւ աւել լազանց, որ վարդապետի մը գրչին չկայէր (տես յերես 98), և կը պատասխանէ: Կ'երեւի, որ ըսածներուն ինքն ալ չհասնելով, և թէ թշնամին չյայտնէր, յանկարծակի ի՞նչ երազ կ'ըտեսնէ, ի՞նչ հով կ'ըմբռնէ մէջ անդրը, և կ'ընէ կ'ընէ (որ կարգէն ալ չէ, և կարծես թէ օտար ձեռք մը մտեր է) թէ, «Սխիթարեանք այս օրուան օրս կ'երգում կ'ընենք, որ Հայոց ազգը հերետիկոս է հերձուածող է, և այլն և այլն»:

«Վիտա կ'ընեմ՝ այս երգումն ընողին, որ թերեւ բանի մը հոգի ունի իւր հետ, և չէ թէ,

Աստուած չ'ընէ, Սխիթարեան միտքանութիւնը որ այսպէս յանդգնի Հոռոմի սուրբ ժողովքէն վեր նստիլ, անոր իրաւունքը յափշտակելու անկէ առաջ գտաւ վճռել Հայոց ազգին այսպէս կամ այնպէս ըլլալուն վրայ, ասանկ ծանր նիւթի մը մէջ: Իսկ կ'ընեմ, որուն վրայ ազգը վատահաւթիւն ունէր, թէ իւր կողմնէն վատաբան և ջատագով կեցեր են միշտ, ինչու յոգնեցար, թուլցար և դատախազիկ որպէս թէ ոտքը ինկար մեղաց ընելով. . . միթէ կը կարծես, որ հաւատաց երգմանդ. . . մեկալ կողմէն ազգը տեսնելով բուխարեութիւնը և իւր խաղաղութիւնը, միթէ չ'ընողներ ետեւ, չ'ընողներ, չ'ընողներ քեզնէ. . . արդ՝ ի՞նչ շահեցար: Կորէն կը դառնամ խոսքիս վրայ. դուն այդ անձունի երգումն ընելով, այն խարդակի խտայնքէնին զբուցածը զբուցելով, որ բուն ձեռք մէջի ձեռքով տեսնէ, որ բուն մըն ահա վեճը գաղտնեցաւ, հաշտուեցար, պաղտուեցար, ամէն բան լրմնացաւ, և դիմադեմ կենտրոն տեղ քովէքով կեցեր ուրեմն, և մէկ բերան նզով կարգացէր ազգին վրայ. . .»:

«Չէ, այսպէս չ'ըլլար կոր բանը, այլ ինքն ալ գիտնալով, որ թշնամի և բարեկամ կը տարակուսին և չեն հաւատար երգմանը, (և սպառցող անկէ կ'երեւի), որ նորանց գրչը անոր գէմ շարժելով, զորս դուն պատու իրեցեր, լի խեղիատակութեամբ կը շարունակէ գրքիկը մինչև ետքը: Ի՞նչ ըսենք, ի՞նչ կ'ընենք մոտտալ այս նորերուկ կատակերգութեան (բուն տիպին) վրայ. . . այս պակաս էր ազգին մէջ:

«Վրդ՝ մերք ճշմարտապէս ազգասէր, և աղնաջատագով Սխիթարեանք, և մանաւանդ ինչ պէս շատ ուշիմութեամբ կը գրէ Վրդուց լրագրի իւր 430 թուոյն մէջ, Սխիթարեան լուսաւորեալ վարդապետը Վենետիկյ որք ի Փարիզ, առանց բեւեռին իրաւունք մը տարու այս երկու պարտաւարքերուն և իրենցմէ ծնած ճիւղներուն, կը հերքէր և կը մերժէր դանտը մէկ մէկու ետեւէ, և կը կենտրոն երջանիկ Սխիթարայ դժագրած բանաւոր ձամբուն մէջ, միշտ որ ծարձելով հոգեորական և բողոքական ուսմանը ազգիս մէջ և խաղաղաբար ապրելով:

«Հարցմանս. — Շատ աղէկ, Վարդապետ, ասոնք մեծ միտքարական խօսքեր են ազգին խոհեմներուն. բայց ներքէ մեզի, որ մէկ մուծ և տարակուսական բան մ'ող հարցնենք հրամանալը: Այս խտայնքէն պարտաւարքերը՝ ծակ մը գտաւ, հին սպառեցաւ, այն ալ պատուած ստութեամբ մը ծածկուելով վախէն: Ինչ որ է նէ, անոնց չար արուեստը շատնցուրնէ կը ձանաչէ ազգը և զինքը կը պատասխարէ: Իսկ այս հարցերէն պարտաւարքերը ինտոք Վենետիկյ վանքը ելաւ արձակ համարձակ տպեց:

«Պարտախնդիր. — Թէ որ մէկը գիտնայ, թէ միտքանութիւնը և ընկերութիւնը ի՞նչ ճրար և կծիկ մըն է, ուր այնքան լաւ և վատ բաներ կը պարուստիկ, չարամանար: Արբոր ամէնքը մէկ բերնի դանդիկա կը նային իբր անխալ, և կուրա վերայ հնազանդութիւնը կը կարծեն վարձատրական, ի հարկէ ատեն ատեն այսպիսի մեծ զարտուղութիւններ երեւան կ'երեն, ինտար որ եղաւ ատկէ երեսուներեք տարի առաջ՝ ազգային սղրոյ և միտքանութեան ատենը: Սխիթարեան կը կարծէր, որ այս պարտաւարքերը խորհրդով և ժողովով և ամէն վանքաց հաւանութեանքը տը պէցին, Հին նորահասակ վարդապետները՝ զերենք գրականութեան տուրէն, աշխարհքէ տեղեկութիւն (խաղաղ) չ'ունին: Իսկ լսողի, համով Վարդապետաց լեզուի գիրքեր՝ ձեռքերնին և չորս կողմերնին կեցած ժամանակը, կը կարծէր, որ արժանի կը համարին առնել կարգաւոր լրագրոյ ընկերներէն մէկուն հայերէն շինած գրքոյ կը, որ անկէ խելք տարիլն:

«Իսկ միտքանի իրենց պաշտօնին և ծառայութեանը համար դուրս կ'ընեն ներս կը մըտնեն զբողոքաւ, թէ որ զանիկա կարգան ալ նէ,

չեմ կրնար ըսել, թէ իրենց մտքն ինչ կըզատեն. վասն զի թէ որ դատմունքն իսկ կապեալ չ'ըլլայ, ընդունին կապուած է ընդդէմ որոշման մեծաւորին . . . : Աւստի մէկը բերց ծրեց . մէկը չգիտեմատեն ալ ունեցաւ ձեռագիրը գրելու գրուի կարգալու, կամ թէ ըսէ, նոյն մտքին տէր, ասաց և եղև, հրամայեաց և հաստատեցաւ :

«Արդ՝ իրաւունք է մի բոլոր և ամէն մէկ Արևիթարեանց շարակը տալ այս ծանր անխնայութեամբ : Միթէ ասոնք ամէնը մէկ կարգապարէ (խախտէ) թափոնն են, ուսկից պակասաւորը և կատարեալը անխորհր կ'երեն : Ահա փորձով և օրինակով ալ ասիկա ձեզի ցուցնեմ :

«Վանքէն վարդապետները երբոր պաշտօնի մը կը հեռանան, վանական չըջանը ըստ մասին կ'ընդարձակի, և իրենց ուսմանը և կենցաղագիտութեանը չափով՝ իրենց դատմունքը և ընտրողութիւնը կը բանեցընեն ըստ պարագայից : Ասոր համար Վ. Ա. Վարդապետի վարդապետը՝ Փարիզի վարդապետներուն բերան ըլլալով, առանձին թուղթերով այս հայերէն գրքիկն ապօրինիաւոր ըլլալուն վրայ վանքը համոզեց և խեղճութեամբ, և նոյն միջոցին՝ նամակով մըն ալ Արևիթարեանց մէջ միտքը հրատարակեց : Վանքը ինքն իրեն եկաւ և հոն խորհրդով և հաճութեամբ ամենեցուն տեսողակ մը տարագրեց : Ուր կը հերքէ և չ'ընդունիր այն հայերէն պարսաւագրքին սրտառոց ըսածները և խրկեց ՚ի Արտանդնուպօլիս որ հրատարակեն : Արտանդնուպօլիս վարդապետները զանկա խափանեցին ու ծածկեցին՝ ՚ի հարկէ արբայն սխալէր է ըսելով, հոգ չէ, և իրենք անոր տեղը բողբոջական թուղթ մը տրակեցին՝ իբր վանքին հաւանութեամբ՝ Արևիթարեանց վարդապետը պատարակելով որպէս ինքնագրուի . և այն հայերէն գրքիկը պաշտպանեցին . ուր զարմանալին այն է, որ գրքիկը աշակերտաց կանոնը՝ իրենց մեծ ձեռնարկութիւն ըրեր են . որպէս թէ Ա. ասաց, (Արևիթարեանց) ասաց . ասոնք ալ թէ արբայն երաշխաւոր է, ուրեմն աղէկ է . արբայն չճանչնար ուրեմն գէշ է : Ալ միւս ձեռնարկութիւնը, թէ Արևիթարեանց վարդապետն իւր թուղթը և կարծիքը՝ (որ է Փարիզեաց պիտղոսեանց) օտար տպարան տպեց . արբայն և մեք չենք ճանչնար և չենք ընդունիր : Ալ տեսնէք, որ միշտ արբայն խօսքով անխաւ կը ցուցնեն, ուր վերը գործքով սխալական ցուցըցին ինչպէս որ ըսի : Այն իրաւամբ մենք ալ իրենց ինչու չ'ըսենք . թէ դուք ալ ձեր թուղթը և կարծիքը՝ օտար տպարան տպագրեցիք . արբայն և մենք չենք ճանչնար և չենք ընդունիր . . . : Միթէ տղայից կ'ըսեն այս բաները . ո՞վ կըկարծեն համոզել : Չ'երկնցնեմ, կըտեսնէք Փարիզի վարդապետաց խաղաղական և ազգասիրական խօսքերը և փաստը : Բողբոջացէք Արտանդնուպօլիսի վարդապետաց խօսքերուն հետ : Որոց վերջապէս այս կ'ըսենք, թէ դուք հանեցէք, հոգեկեցէք ազգին մէջայդ տեսողակները ՚ի նստատ մեր բանիցս . ապա թէ ոչ, մենք հոս անոր օրինակը ունինք, կը տպենք ՚ի Փարիզ . կամ կը խրկենք անուանի լրագրաց, որուն դէմ տեսնենք ինչ ըսելիք ունիք :

«Հարցումնք . — Թողութիւն ըրէ, Վարդապետ, որքան որ նեղութիւն է՝ մէկ բան մըն ալ հարցնենք, ինչու համար Հ. ում օտար ազգաց բաներուն կը խառնուի, որով ազգատեսչներն առիթ կ'ունենան մեզ միշտ այսպէս իրար ձգելու : «Արարտիսանի . — Այս պատասխանը՝ թէ որ կը հաճիք, ուրիշ յարմար օրուան մը թողունք :

«Ալ խնդրեմ՝ որ այս գրածս ժամ մը առաջ լրագրից մէջ հրատարակէք :

«Ալ ողջունելով և նոր տարի շնորհաւորելով Վերջույդ, մնամ միշտ ՚ի ծառայութիւն ազգիս :

«Գրիգոր վարդապետ խաղաղութեամբ կարգապետն որ ՚ի Փարիզ :

1) Ստաքիտ . Արևիթարեանց փիլիսոփայն ծնած տեղոյն անուանէն է, որով Ստաքիտացի կոչուեցաւ : Իւր աշակերտները իրենց զբօսանքը հաստատելու համար Նա ասաց կամ Ստաքիտացին աւսաց խօսքը բաւական կը սեպեն, և ստով իրենց հակառակորդները կը լռեցնեն : Այն զբաւոր ձեռնարկութիւնը կը գործածեն նաև Պիթագորասը :

ՎԷՊԻ ՄԵՆՈՒՆԻ

ՆՈՒՐԵԱԼԻ ԱՌԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆՆ

ՍՈՒՆԿ

Վերջի երկրորդ :

(Շարունակութիւն) :

Թէպէտ ժամանակը քիչ մը ուշէր, և գեղը հասնելու համար երկու մըն կ'ուզէր, սակայն երիտասարդ հովիւը որուն անունն էր Միքայէլ Վեյսէր, մեկէն ձամբայ ելաւ շուտով իր հօրը քովը երթալու, որ հասած ատենը երբոր զինքը աւելի լու գտաւ ու մահուան վտանգը անցուցած՝ շատ ուրախացաւ ու միտքաբեցաւ : Իր առջի հօգը ան եղաւ որ կոմսուհիէն ՚ի վարձ առած հարիւր ոսկին իրեն տայ . ետքը դուրս ելաւ այն ստակով հիւանդին համար հարկաւոր եղածը գնելու : Ըրու մը դարձաւ ձերմակ հաց բերաւ շիշ մը գինը ու քիչ մըն ալ միս, որ կրակին վրայ դրաւ որպէսզի զօրացուցիչ արգանակ մը պատրաստէ վտահար հօրը :

Երկրորդ առաւօտ Միքայէլ ելաւ շտակ այն անտառը գնաց ուր որ սոխակին անուշ ձայնը կոմսուհին զմայլեցուցեր էր : Սացառներու մէջ փորուած հինաւուրց կաղամխի (գալուզ) ծառ մը կար, սոխակը ասոր մամուպատ կոճղին վրայ իր բոյնը շինած էր, որուն դրսի կողմը չորացած տերեւներով ու կնիւնով (սաղորթ օթը) հիւսած էր, իսկ մէջը կակուղ մտղերով ու բրդով պատած էր : Արջի անգամ երբոր Միքայէլ գնացեր էր նայելու, մէջը հինգ հատ թխագոյն հաւկիթներ տեսեր էր . իսկ այս անգամ այն հինգ հաւկիթին տեղ հինգ հատ նորածին ու նորսփեսուր թռչուններ տեսնելով շատ ուրախացաւ . շուտ մը ձամբայ ելաւ Սթեֆէլու գեղը կոմսին երթալու, որպէսզի բայնին համար տեղ մը որոշէ : Այն օրը ուրիշ երկու սոխակ ալ բռնեց, ու իրենց ձագերով մէկ տեղ վանդակի մը մէջ դրաւ ու կոմսուհույն պաշտօնը հաստ . շատ ուշ ըլլալով պարտեղարանին քով գնաց, որ սիրով զինքը ընդունեցաւ :

Պարտին քովը գեղեցիկ պղտիկ անտառ մը կար որուն մէջ մեծ զարդ կընէին սաղարթախիտ կաղնի, բարտի ու կաղամխի ծառեր : Այն զօւար ձալի անտառին մէջ սքանչելի զովութիւն մը տեսնուած էր, ու մէջը պարտեղու համար այլեւայլ մաքուր ու աւաղուտ ձամբաներ կային . սեղ տեղ ալ մամապատ գեղջկային նստարաններ, Նիտառին մէջ տեղը բարդակաձև պղտիկ պարտեղ մը կար գոյնգոյն բուրաղուարձ ծաղիկներով զարդարած ու բոլորտեղը վարդենիներով պատած :

Մէկ անկիւնը ապուռած ժայռերու ու թանձրախիտ ծառերու մէջ խրճիթ մը կար՝ գոթացի ճարտարապետութեամբ շինուած քմառան մը քով : Այս խրճիթին առջևէն առուակ մը կանցնէր ու ժայռի մը վրայէն փրփրալով՝ ակնվանի պէս ձերմակի վար կ'իջնար, և իր ալիքներուն բողբոջութեամբ այս խաղաղաւէտ մենարանին մեծ գլուարձութիւն կ'ուտար : Կոմսուհին այս խրճիթէն շատ կ'ախորժէր, ու երբոր աղջիկները լեզուներ կամ փիանոյ սորվելու հետ կ'ըլլային, ինքը հոն կ'երթար կար կ'ընէր կամ կըկարգար :

Այս խրճիթէն հարիւր քայլ հեռու ու պղտիկ առուակին մօտ անտառին ծառախիտ տեղը ուռնի մը կար . որ շատ կընմանէր ան ծառոյն որուն վրայէն սոխակին բոյնը հաներ էր : Միքայէլ աղէկ մը աս ծառը գիտելէն, ու ամէն բան առաջուց պատրաստելէն ետքը գնաց երկու սոխակները բերաւ, ճարպիկութեամբ ծառին վրայ ելաւ, լուսնի լուսով բոյնը կ'ապկըպէց, ու շուտ մը վար իջաւ : Կոմսը որ անոր աս ամէն ըրածները ծածուկ տեսեր էր, եկաւ իրեն մեծամեծ գովեստներ տուաւ :

Երկրորդ օրը ճարտարամիտ հովիւը թաւուտ մորենիի մը մէջ պահուրտած՝ սկսաւ գիտել թէ սոխակները իրենց ձագերը կըկերակուեն թէ չէ, որոնք քիչ առնեն սկսան ձուռողել, կերակուր ուղէլ . և այն ինչ եղաւ բարեմիտ Միքայէլին ուրախութիւնն, երբոր տեսաւ որ մայրերին մէկէն վաղեցին իրենց կերակուր տալու . վաստը-

կեցայ, վատորկեցայ, կանչեց, ու չորս ոտքով վազեց կոմսին աւետիս տալու, ու վաղը արեւ ծագելուն պէս սոխակը սիրտի երգէ կ'ըսէր :

Շատ աղէկ ըսաւ կոմսը, ես իմ կողմանէս յեռան ոսկին պատրաստեմ եմ, խօսքդ ելելուն պէս կրնաս մէկէն առնել տանիլ :

Երիտասարդ կոմսը իր երկու քրոջը իմացուցեր էր իր միտքը, որ կ'ուզէր իրենց մօրը անուան տօնին օրը յանկարծական ուրախութիւն մը իրեն պատճառել իր սիրելի սոխակին բողբոջածայն երգերովը : Ուստի և երեքն ալ միասիրտ հաւանութեամբ իրենց մանր գլուարձութիւններէն իրենք զիրենք զրկելով Միքայէլին յիսուն ոսկին ժողկեր էին :

Երեք օր ետքը պայծառ ու անամոլ հորիզոնէն ելաւ ծայրակարմիր արեգակը . կոմսը խրճիթը գնաց, և ինչ երջանկութիւն . սոխակը սքանչելի ձայնով կ'երգէր : Ետքը օրը շնորհաւորութեան համար եկող գացող անպակաս եղաւ պաշտօնը . վերջապէս իրիկուան դէմ կոմսուհին տեսնելով որ ալ եկող չ'իւր, ըսաւ իր որդւոցը . «Այ գեղեցիկ օրը լաւ կ'երպով լըմնցնելու համար պէտք է որ ընտանեկան մէկ հանդէս մըն ալ ընենք» . ու իր երեք զաւակացը հետը պարտեղը իջաւ . Երջանակը գարուն էր ու իրիկունը սքանչելի : Կոմսը դառնալով իր մօրը ըսաւ . «Խրճիթին բոլորտեղը այնպէս գեղեցիկ է որ մարդուս փափաքը կուգայ հոն երթալու» :

Այնքան գովեցին այս խորհուրդը, խրճիթին քովը գացին և սաղարթախիտ կաղնույն տակը կըլոր սեղանի մը չորս կողմը շինական աթոռոց վըրայ նստան . կարակնածեւ լուսինը կաղնույն ձիւղերուն մէջէն անցնելով՝ մերձակայ առուակին ջրերուն փայլ մը կուտար, սեղանին վրայ եղած արծաթեղէնն ալ գեղեցիկ կը փայլէր : Երեսուհասակ կոմսուհիները այս խրճիթին չորս գին թաղարներով (սաղորթ) գոյնգոյն ծաղիկներ բերէին, որոց անայհատ օգին մէջտարածուելով՝ տեղոյն գեղեցիկութիւնը կ'աւելցընէր :

Նիտառուան սրտիս ուրախութեանը չափ չ'իւր ըսաւ կոմսուհին . սրչափ աւելի սիրելի է ինձի այս գեղեցիկ իրիկունը, բան թէ այն ցորեկուան հանդէսները, և մեր պաշտօնին սրահը որ չափ ալ վայելու չ'գորդարեալ ըլլայ, կրնայ բողբոջատուիլ մեր այս չորս կողմը պատած բնութեան գեղեցիկութեանը :

Ահ, աշխարհքիս ալմկալից զօւրցատրութիւնները որչափ ընդունայն և անհամ են համեմատութեամբ մեր իմաստալից և մտերմական խօսակցութեանցը :

Որպէքը նորէն իրենց մօրը բարեմաղթութիւններ ըրին : Կուզէք, ըսաւ կոմսուհին, սիրելի որդեակք, բոլոր սրտիս բողբոջանքը կատարել և զիս մայրերու մէջ անկէն երջանիկն ընել, ամենէն առաքինութեան ձանապարհէն մի խոտորիք . տարիները ջրի պէս կ'անցնին, աներեւոյթ կ'ըլլան . առաքինութիւնն է միայն որ հաստատուն կըմնայ : Մեր ալ զձեզ Նախախնամութիւնը տանի, օրուան ժամերը թէ որ հարկ է՝ տուէք մարդկանց, բայց իրիկունը գալուն պէս ինքզինքնիդ ժողկեցէք և անցուցած ցորեկինիդ բնեցէք . վասն զի միշտ գիշերուան լուսութեանը մէջ մեր սրտին աւելի մօտ է Արտանդնուպօլիս խօսքերս ըսելէն՝ ետքը, կոմսուհույն սիրտը ելաւ ու լռեց . նոյնպէս լռեցին նաև որպէքը : Վսեմ, բողբոջ և բարեպաշտական լուսութիւն մըն էր ասիկա :

Ահ ահ սոխակը յանկարծ սկսաւ իւր անոյշ ձայնը ձգել . կոմսուհին զարմացած մէկէն աւանջ դրաւ և կարծես թէ կը վախնար որ չ'ըլլայ թէ երգ մը պակաս ըսէ . «Չեր այս մտադրութեանը շատ շնորհակալ եմ, ըսաւ իւր որդւոցը, երբոր սոխակը ձայնը կորեց . բայց ինչու համար այս անմեղ թռչնակին ազատութիւնը վերցուցիք . անգթութիւն է ասիկա . ձեր փափաքը այն էր որ վրաս ունեցած ձեր սիրոյն նշան մը տար . հիմա որ բողբոջանքներուդ հասաք՝ ազատեցէք ինք՝ բանասիրիկալը» :

(Մնացորդը հետևեալ թուով)  
Պարտիտո՝ Պօղոս Տափեան, որ ՚ի Փարիզ :